**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ գնահատող հանձնաժողովի 2020թվականի հուլիսի 17-ի №12/17.07.20 արձանագրության որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն

Բաց մրցույթի ծածկագիրը՝ ՀՋ-ԲՄԸ-ՀՀԱԾԳ-12/17.07.20-ԱՄ

Պատվիրատուն «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ, որի հասցեն է Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, 2302 ք. Հրազդան, Գործարանային 1, հայտարարում է բաց մրցույթ:

Բաց մրցույթում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել պայմանագիր՝ (այսուհետ՝ Պայմանագիր) գնման առարկա հանդիսացող՝ հաշվապահական հաշվառման աութսորսինգային ծառայության մատուցում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն մրցույթին մասնակցելու հավասար իրավունք:
Մրցույթին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 2020 թ.սեպտեմբերի 07-ին ժամը 13:00, «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, 2302 ք. Հրազդան, Գործարանային 1, հեռախոս՝ (223)60712, ֆաքս՝ (223)23612, e-mail՝ info@raztes.am:

Հայտերը բացվելու են Ընկերության գնահատող հանձնաժողովի նիստին՝ 2020 թվականի սեպտեմբերի 07-ին ժամը 14:00:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել «ՀրազՋԷԿ» ԲԲԸ գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Մնացականյանին, հեռ.(093)932233:
Բողոքարկումն իրականացվում է սույն մրցույթի հրավերով սահմանված կարգով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ֆինանսական վարչության պետ՝ Ա.Ավետիսյանին, հեռախոս 077 41 14 96 Էլ. փոստ ՝ aavetisyan@raztes.am:

Պատվիրատու «ՀրազՋԷԿ» ԲԲԸ